

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՈՒՐԱՐՏՈՒՒ

(ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ) ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԸՍՏ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԵՒ ՎԱՆԻ ԱԳՔԻՒՐՆԵՐԻ,

Ասորեստանի թագաւորները՝ ձգտելով Առաջաւոր Ասիայի փոքրիկ թագաւորութիւններից ստեղծել մի միահեծան կայսերութիւն իւրեանց իշխանութեան ներքոյ, այդ փոքր թագաւորութիւնների կողմից հանդիպում էին զօրեղ ընդդիմադրութեան, որոնք վերջին ճիգը թափում էին պաշտպանելու իւրեանց անկախութիւնը: Շատ գէպքերում այդ կռիւր ոչ թէ միեւնոյն նպատակին ձգտող երկու զօրեղ հակառակորդների մրցման բնաւորութիւնն էր կրում, այլ ընդ հակառակն՝ Ասորեստանը կրւում էր պաշտպանելու իւր՝ ամբողջ երկրի վերայ իշխելու և Աշուրի բոլոր մարդկանց նուաճելու իրաւունքը, մինչդեռ միւս ազգութիւնները բաւականանում էին այդ ձգտումները վանելով և որքան հնարաւոր էր, պաշտպանուելով ուրիշ թագաւորների կողմից կլանուելուց: Բայց այդ՝ ցայսօր Ասորեստանի անհնազանդ աւատական կարծուած՝ աղգերից գտնուեցան և այնպիսիք, որոնք իսկապէս մրցակից էին հանդիսանում Ասորեստանին նրա համաշխարհային պատմական ասպարիզում, որոնք նորա պէս յառաջ էին խաղում պարզ և որոշ նպատակով—հասնելու աիեղերական իշխանութեան այն աստիճանին, որին ձգտում էր Ասորեստանը: Ֆրանսիացի ասորագէտ Դելիատրի և գերմանացի Վինկլերի սրամիտ եզրակացութեանց շնորհիւ ներկայումս պարզուեց, որ Տիգրէթ—Պիլեսեր II-ի թագաւորութիւնից սկսած՝ Ասորեստանի գոյութեան ամբողջ ընթացքում

Միջագետքի հարաւային կողմը՝ պարսից ծոցի և արաբական անապատի մէջ սալորոզ քաղղէական ցեղերի մէջ Բաբելոնի վերայ իշխելու և Սումեր և Ակադի թագը ստանալու համար կատարի կռիւ էր տեղի ունենում:

Այդ պատերազմը վերջացաւ միայն Ասորեստանի անկումով, երբ քաղղէական իշխաններից մինը՝ Նաբուպալասարը (Նա—բու—պալ—ուսուր) Բաբելոնի գահ բարձրացաւ և հիմնեց Նոր—Բաբելական՝ իսկապէս քաղղէական թագաւորութիւն: Այդ պիտով «քաղղէացիք և բաբելացիք» անունները հանդէս են գալիս որպէս առանձին տոհմական տերմիններ (եզր), որոնք համարիչ չեն: 8)

Սոյնանման մի բան մենք տեսնում ենք և հիւսիսային ազգերի մէջ, որոնք բնակւում էին Միջագետքի գետերի ափունքների մօտ, Արաքսի հովտում, Վանայ և Ուրմիոյ լճերի մէջ եղած տարածութեան վերայ: Ասորեստանի թագաւորները ստիպուած էին պատերազմել նոցա հետ՝ ոչ թէ այդ ժողովրդի վերայ իշխելու, այլ և մի քանի դէպքերում՝ իրենց անկախութիւնը պաշտպանելու համար: Հիւսիսային՝ իրարից անկախ ահագին թուով ազգերի մէջ, երբեմն երևում էին փորձեր իրար հետ միանալու և մի քաղաքական ամբողջութիւն կազմելու. կազմւում էր մի ոյժ, որը յառաջ էր խաղում ուրիշ թագաւորութեանց, այդ թւում և Ասորեստանի, հաշուով իրեն իշխանութիւնն ընդարձակելու պարզ նպատակով: Այսպիսի դէպքում տեղի էր ունենում կեանքի և մահու խնդիրը որոշող մի պատերազմ, որի ելքը վճռւում էր՝ թէ երկու հակառակորդներից որին պէտք է պատկանի բոլոր ազգերի վերայ իշխելու իրաւունքը:

Այն երկիրը կամ թագաւորութիւնը, որը ըստ Ասորեստանի յիշատակարանների հանդէս է գալիս հիւսիսային ազգերն իրար հետ միացնող և Ասորեստանին մրցակից, կոչւում է Ուրարտուի երկիր: Բայց ներկայումս այդ երկրի մասին ոչ թէ միայն

8) H. Vincler, Untersuchungen zur altorientalischen Geschichte, 1889 Երես 47. համեմատել Delattre, Les Chaldéens jusqu 'a la fondation de l'empire de Nabuchodonosor, 1889.

Ասորեստանի յիշատակօրաններից տեղեկութիւն ունինք, այլ
 և նրա թագաւորների սեփական ազգային արձանագրութիւն-
 ներից, որոնք գրուած են նրանց մայրենի լեզուով գլխաւո-
 րապէս վան քաղաքում, որը և նրանց մայրաքաղաքն էր և ու-
 րիշ տեղերում՝ վանից ամեն կողմ: Այդ արձանագրութեանց մէջ
 նոքա իրանց երկիրը ոչ թէ Ուրարտու չեն կոչում, այլ և այդ ա-
 նունը բոլորովին չեն էլ յիշում: Նոքա իրանց կոչում են Բիայնա
 երկրի թագաւորներ, իսկ իրենց մայրաքաղաքը Տուսպա (ներկայ
 վան քաղաքը): Չընայած Բիայնա երկրի թագաւորների և Աս-
 րեստանի արձանագրութեանց մէջ յիշուած Ուրարտուի թագա-
 ւորների նոյնութեանը, այնու ամենայնիւ Բիայնա և Ուրարտու
 անունները լիովին համանիշ չեն, այնպէս որ՝ նոցա նոյնութիւնը
 միայն յարաբերական է: Ասորեստանի թագաւորների հասկացո-
 ղութեան համեմատ Ուրարտու երկիրը գտնւում էր վանայ լճի
 գէպի հիւսիս և ամենայն հաւանականութեամբ Արաքսի հովտում՝
 Արարատ սարի միւս կողմը. բայց Բիայնա երկրի կամ վանի
 թագաւորներն իրանց կոչում են իշխան վանի մօտ՝ գէպի արե-
 ւելք գտնուած երկրի, իսկ այդ նեղ սահմաններից դուրս գրո-
 նուած երկիրները նոքա ստիպուած էին նուաճելով ձեռք բե-
 րել: Բայց և այնպէս, մեզ անկասկած հաստատ բան է ներկա-
 յանում այն՝ որ վանը կամ Բիայնան համեմատաբար աւելի
 ուշ է նշանաւոր քաղաքական կեդրոն դառնում, այն է IX դա-
 րու առաջին կիսին Քրիստոսից առաջ, իսկ աւելի վաղ այդ կե-
 դրոնը գտնւում էր աւելի հիւսիս և ամենայն հաւանականու-
 թեամբ Արաքսի վերայ, սրտեղ և՛ նոյն իսկ ըստ ասորեստանական
 աղբիւրների՝ հին Ժամանակներից գտնւում էր Ուրարտուն: Վա-
 նի շրջանի Ուրարտուի տարածութեան մէջ, այսինքն սկսած IX դ-
 դարուց, նկատուած ենք, որ վանի թագաւորներն իւրեանց՝ Արա-
 րատի միւս կողմում եղած երկիրը համարում էին նախնական
 գաւառ և բացի վանից ոչ մի տեղ այնքան արձանագրութիւն-
 ներ չեն թողել, որքան այդ տեղ: Բայց միմիայն ասպագայ գիւ-
 տերից պէտք է սպասենք այն հարցի վճռին՝ թէ ինչ տոհմե-
 կան և քաղաքական յարաբերութեանց մէջ էր գտնւում

Բիայնան աշխարհագրագրական այն աւելի մեծ ամբողջութեան հետ, որին ասորեստանցիք Ուրարտու են կոչում: Ներկայումս այդ բանի մասին կարելի է միայն վարկածքներ յայտնել⁹⁾:

Աւելի հաւանական է ենթադրել, որ Ուրարտու երկիրը (յետագայում Բիայնան) համեմատաբար աւելի ուշ, պատմութիւնից մեզ արգէն յայտնի ժամանակ միայն առաջնակարգ եղաւ այն բազմաթիւ ցեղերի մէջ, որոնք խմբուած ապրում էին Արարատ սարի միւս կողմը՝ Արաքսի հովտում: Այդ ցեղերը անկախ ամբողջութիւններ՝ միութիւններ էին, բայց քաղաքականապէս հպատակում էին իրենց մէջ աւելի ուժեղ ժողովրդին, ինչպիսին յայտնի ժամանակաշրջանում հանդիսանում է Բիայնան: Այդ հպատակութիւնը կարող էր լինել խաղաղ՝ դաշնագրութեան պէս, բայց հաւանականաբար հետեւանք էր մի ժողովրդի նիւթական և զինւորական գերազանցութեան: Տեղական պայմանները՝ երկրի դիրքը, նորա Միջագետքի հզօր թագաւորութիւններից հեռու լինելը, շրջակայ դժուարանցանքի լեռները և Արաքսի միանգամայն յաջող ուղղութիւնը բազմաթիւ վտանգե-

9) Ջարմանալին այն է, որ ասորեստանցիք շարունակում էին Բիայնան կոչել իւր հին Ուրարտու անունով, որովհետեւ ըստ նոցա հասկացողութեան այդ անունները նշաննիշ են: Սէյսը Bitani անուան մէջ տեսնում է ասորեստանական Բիայնա ձևը, բայց թէ ինչո՞ւ լրիւ և սկզբնական ձևը պահպանուեց ասորեստանականի մէջ, իսկ ազգային լեզուի մէջ մնաց փոխուած անունը—անհասկանալի է: Աւելի տարօրինակ է երևում մեզ այն փաստը, որ Վանի արձանագրութեանց մէջ չի պատահում Ուրարտու անունը: Կարելի է երկու ենթադրութիւն անել. կամ այն, որ Ուրարտու անունը Արաքսի մօտ եղած երկրին պատկանում էր շատ հին ժամանակներում և պատմական շրջանում յետագայ բնակիչներից այլ ևս չէր գործածւում, մնալով միայն օտար ազգերի մէջ, կամ այն, որ Ուրարտու անունը Արաքսի մօտ եղած երկրին տրւում էր միայն օտար ազգերից և տեղական բնակիչներից երբեք չէր իւրացւում, ինչպէս հրէայք և Armenioi (Արամիւնեացիք) անունները, որոնք գործէին դրւում միմիայն օտարազգերից, չին Բարեւական Ustu անունը, որի մէջ կամենում էին տեսնել Ուրարտուի փոխուած ձևը, իսկապէս Ակկադի անուն է և մեր Ուրարտուի հետ ոչինչ կապ չունի:

բով և ջրանցքներով նպաստում էին այդտեղ քաղաքական կեդրոն կազմակերպել: Ըստ այդմ այս տեղը յարմարէր և նշանաւոր քաղաքակրթական կեդրոնի գոյութեան: Հայկական բարձրաւանդակից սկիզբն էին առնում Առաջաւոր Ասիայի նշանաւոր գետերը՝ Եփրատն ու Տիգրիսը, որոնց վրայով Ուրարտուն կարող էր քաղաքակրթական յարաբերութիւն հաստատել քետացւոց, արամէացւոց, ինչպէս և ասորա-բաբելացւոց հետ:

Այդ երկրի Ուրարտու անունը, որ յետոյ հանգէս է գալիս որպէս Բիաինի թագաւորութիւն, բաբելացիներից և ասորեստանցիներից անցել է և միւս հին ազգերին: Հրէայք այդ երկրին կոչում էին Արարատ, որը անկասկած նոյնանիշ է ասորեստանական Ուրարտու անուան, և ոչ թէ մի սարի անունն է, այլ երկրի, այնպէս որ՝ Ծննդոց գրքի յայտնի տեղը 8, 4 այն բանի մասին, որ Նոյի տապանը կանգնեց Արարատի լեռներին, պէտք է հասկանալ Արարատ երկրի լեռներին, ինչպէս այդ տեսնում ենք երկրորդ Թագաւորութեան գրքի 19—37-ի մէջ, որտեղ ասւում է, որ Ասորեստանի Սաղմանասար թագաւորին սպանողները հալածողների ձեռքից փախան Արարատ երկիրը, Աւելի ուշ՝ Բաբելացւոց լեզուի մէջ այդ բառը շարունակւում էր գոյութիւն ունենալ մինչև անգամ այն ժամանակ, երբ Պարսից շրջանում այդ երկիրը կոչւում էր Արմէնիա, Armina, որովհետև աքեմէնիդների երեք լեզուեան արձանագրութեանց մէջ պարսկերէն կոչւում է Արմինա (միգիերէն Arminijap), բաբելացւոց լեզուով կոչւած է Urastu (Ուրարտուի ուրիշ ձևը): Հերոդոտը Արաքսի հովտում ապրող ժողովրդին անուանում է Alarôdes, Ալարօդացիք, որը ըստ երեւութին Ուրարտուին և Արարատին նոյնանիշ է միայն r և l տառերի փոփոխութեամբ: Որպէս մի ապացոյց այն զարմանալի միաւորութեան, որով չընայած քաղաքական և տոհմագրական փոփոխութիւնների՝ միևնոյն աշխարհագրական անունները կարող են հազարաւոր տարիներ գոյութիւն ունենալ, ծառայում է այն փաստը, որ Հայաստանի

երևանեան նահանգի սահմաններում գտնուած երկիրը ցայսօր կոչում է Այրարատեան աշխարհ: Իսկ ինչ Արարատ սարին կը վերաբերի, նրա անունը ակներև է, որ աւելի ուշ՝ քրիստոնէական շրջանի ծագումն ունի՝ ծննդոց գրքի համաշխարհային ջրհեղեղի մասին պատմածը այդ սարի հետ կապելու շնորհիւ:

Արարատը երկիրը՝ համաձայն վանի և ասորեստանական աղբիւրների՝ իսկապէս կաղմում էր ուրիշ ամբողջութեան մի մասը, որը նրանց մէջ կոչում է Նաիրի¹¹: Վանի թագաւոր Սարգուրի 1ը, որ մեղ թողել է Ասորեստանի լեզուով արձանագրութիւններ, իրան կոչում է Նաիրի երկրի թագաւոր, իսկ Ասորեստանի արձանագրութեանց մէջ այդ անունը գործ է ածւում որպէս անորոշ անուն (տերմին), որ նշանակում է հիւսիսայն ցեղեր, որոնք բնակւում էին Տիգրիս և Եփրատ գետերի վերին մասերում, վանայ և Արմիոյ լճերի մօտ և կասպից ու Սև ծովերի ուղղութեամբ: Երբեմնակի այդ անունը տրւում է առանձին ցեղերին, գլխաւորապէս Արմիոյ լճի մօտ, օրինակ Խուբուշկիա երկրին: Նաիրի երկիրների թիւը բաւական նշանաւոր էր. եթէ հաշուենք Ասորեստանի արձանագրութեանց մէջ բոլոր յիշուածները, նոքա հարիւրից աւելի կլինեն, բայց Ասորեստանի արձանագրութիւնները՝ ի հարկէ ինկատի չեն ունեցել հաշուել բոլորը. այն երկիրները, որոնց հետ նրանք գործ են ունեցել, նշանակում են միայն թուով, օրինակ Տիգլաթ - Պիլեսէր Iի արձանագրութեան մէջ յիշուած են Նաիրի 60 ից աւելի երկիրներ, որոնց հետ նա անձամբ գործ է ունեցել: Այդ թագաւորութիւնները իրենց բաղմութեան և ցրուած լինելու պատճառով չէին կարող մի հաստատուն քաղաքական ամբողջութիւն կազմել, բայց ընդունակ էին՝ գոնէ վրանգի ժամանակ՝ ճանաչելու իւրեանց շահերի

11) Այս անունը հաւանականաբար սեմական (ասորեստանական) ծագումն ունի և յոգնակի թիւ է 'նարի' գետ բառի, matu Nairi բառացի նշանակում է գետերի երկիր, երևի ենթադրւում է Տիգրիսի, Եփրատի և Արաքսի վերին մասերը:

միութիւնն ու ամբողջութիւնը և թշնամուն հանդիպում էին տասնեակ ազգերի գաշնադրական մեծ բազմութեամբ: Ինկատի ունենալով տեղերի անունները՝ համարեա՝ անկասկած է, որ այդ բոլոր ազգերը կամ նոցա մեծ մասը խօսում էր ազգակից լեզուներով, որոնք պատկանում էին վանի լեզուի ընտանիքին: 42

Գիտութեան մէջ այդ ցեղերի մասին գեռ ևս հաստատ մի հասկացողութիւն և նոցա իսկական անունները չեն որոշուել, բայց Լընորմանի և Հոմմելի օրինակին հետևելով, կարելի է նրանց Ալարօգացի կոչել՝ գործ գնելով Հերոգոտից վերցրած այդ անունը տոհմագրական և լեզուաբանական մօքքով, նոցա՝ Ասորիքի և Միջագետքի սեմականներից և Իրանի ու փոքր Ասիայի արիացիներից զանազանելու նպատակով: 43) Դա առանձին ցեղ է, յիշեալներից խիստ տարբեր, որը հին աշխարհում առանձնացած գոյութիւն ունէր: Եթէ այդ ցեղին չեն պատկանում ներկայ վրացիք*, սպա պէտքէ ընդունել, որ նա միանգամայն ան-

42) Վերցնենք օրին. Տիգլաթ-Պիլեսեր Ի-ի յիշած 23 երկիրների անունները.—1. Unzamani, Pilakini, Aturgini, Kulibarzini, Sinibirni, Abaeni, Adaeni, Kirini, Abarsiumi, Daiaeni և համեմատենք Վանի արձանագրութեանց մէջ յիշուած Abuni, Aburzani, Aiduni, Udurietini, Toliuni, Husani, Lununini, Eriaini, Etiuni, Azani, Ardini, և ուրիշ նման շատ անունների հետ: 2) Himua, Sururia, Albaia, Nazabia համեմատենք Վանի Baruatainia, Bia, Dakinedia, jrdia, Haldia և ուրիշների հետ: 3) վերջաւորութիւնը Վանի արձանագրութեանց մէջ նշանակումէ ժողովուրդ: 3) Ugina, Վանի Haldina, Hatina, Mana և այլն: na նշանակումէ երկիր: 4) Kidari, Paiteri համեմատել Վանի Kauri, և մարդկանց Sarduri, Uduri և ուրիշ անունների հետ: 5) Tuali, համեմատել Argistihinili և հասարակ անունները. օրինակ asili (տաճարի տեղը), pili—արձան և շատ ուրիշ անուններ. li վերջաւորութիւնը իսկապէս նշանակումէ տեղ, նոյնքան անկասկած ազգակցութիւն նախորդ երկիրների անունների մէջ տեսնումենք ասորեստանական արձանագրութեանց մէջ:

13) Zeitschrift für Keilschriftforschung, յօդուած Հոմմելի. Die Sumero—akkadische Sprache und ihre Verwandtschaftsverhältnisse, Heft 4, երես 330.

* Պ. Նիկօրսկին. թէև կարծում է, որ արձանագրութիւնների լեզուն աւելի վրացերէնի է նման, սակայն հաստատապէս կարող ենք ասել, որ բոլոր արձանագրութիւնների մէջ և ոչ մի բառ վրացերէնին նման չէ: Երկրորդ՝ վրացիք, ինչպէս յիշում է նրանց պատմագիր Գաւիթ թագաւոր-

յայտացած է Փոքր Ասիայի և Անդրկովկասի ներկայ բնակիչների միջից: ¹⁴⁾

Լեզուաբանական փաստերի բացակայութեան պատճառով մենք գեռ հնարաւորութիւն չունինք սրոշելու այդ ալարօգիական ցեղի տարածման սահմանները: Արգեօք նրա հետ որ և է յարաբերութիւն ունէի՜ն Կօսէյներ, Ելամացիք, Արիացիներէց առջ եղած Մարք, այսպէս կոչուած Սուվէրօ-Ակիադիացիք, ինչպէս Հումմիլը կարծումէ, այդ հարցը գեռ հեռու է վերջնական լուծումից: Բայց հազիւ թէ կարելի լինի կասկածել այն բանում, որ Ասորիքի և Փոքր Ասիայի ամենանշանաւոր ժողովուրդը, որը նախածնող է եղել յատուկ քաղաքակրթութեան և քաջ մրցակից Եգիպտոսի և մասամբ էլ Ասորեստանի՝ այն է՝ Քեռացիք պատկանում էին ալարօգական ցեղին: Վանի, Եգիպտոսի և Ասորեստանի ազբիւրներէց յայտնի քեռական անունները, զսրմանալի կերպով կրում են ալարօգական կամ ուարարտական տիպարը ¹⁵⁾:

բաղնը, մինչև Պարսից Պարեհ թագաւորը հայերէն էին խօսում և յետոյ միայն՝ թափառական ազգերի գալստեան շնորհիւ կազմուեցաւ նրանց լեզուն, հետեւաբար այն ենթագրութիւնը, որ այդ ցեղը միայն վրացիք կարող են լինել, անտեղի է, որովհետեւ գեռ ուտիացւոց լեզուն, որը աւելի նման սոյն արձանագրութեանց լեզուին, ուսումնասիրուած չէ:

Դան. Թարգ:

14) Ուրարտուի լեզուի Վրացերէնի հետ ունեցած յարաբերութիւնը պահանջում է աւելի լուրջ յետախուզութիւն: Յաւելով պէտքէ ասել, որ Վրացերէն բարբառները գեռ պահանջում են գիտնական հետազօտութիւն և այդ անելուց յետոյ միայն՝ կարելի կլինի գնել գիտնական համեմատութեան հարցը, « Յամենայն դէպս ձեռնհաս դատաւորներ այդ բանում կարող են հանդիսանալ միմիայն վիրագէտներ և կամ լեզուաբաններ, որոնք մասնագիտաբար կուսումնասիրեն լեռնականների լեզուները, որոնց մէջ կարող ենք յուսալ, որ կլինին Ուրարտուի ժողովրդի յետնորդներ »:

15) Անձնաւորութեանց այնպիսի անունները, ինչպէս օրինակ Sopalili (Եգիպտոս), Sangara (Ասորեստ) և երկիրների ու քաղաքների — օր. Lubar-na, Kunulna, (ասոր) Hatina (քեռացւոց երկիր ըստ Վանի արձանագրութեանց) համեմատել նաև Ասորեստանի արձանագրութեանց մէջ յիշուած քեռական Tarhularna, Tarhunazi, Gamgama, Gargamis անունները Վանի Tarhigamani և բուն քեռական Tarkudimme յայտնի Թեմայի վե-

Քեռացւոց ձեռքով (Եգիպտացւոց արձանագրութեանց մէջ քեռա, Ասորեստանցւոց մէջ Խատտի և Խատի, կամ Խատինա վանի արձանագրութեանց մէջ) Ալարօգական ցեղը դեռ Ասորեստանի համաշխարհային պատմութեան ասպարէզ գուրս գալուց առաջ ձեռք է բերում բաւական ազդեցիկ ոյժ հէնց նոյն իսկ Եգիպտոսի համար, որը այդ ժամանակ միտումն ունէր Առաջաւոր Ափայի վերայ իշխելու: Նրանցից ստեղծուած քաղաքակրթութիւնը, չընայած Եգիպտացիներին և Բաբելոնացիներին փոխ առնուած տարրերի, ցոյց է տալիս ձգտումն դէպի ինքնուրոյնութիւն. իսկ նրանց գրերը, որ մեհենագրերի դեռ չըլուծուած մի ձև են ներկայացնում, միանգամայն ինքնուրոյն բան են:

Ասորեստանի աշխարհակալութեան ժամանակ այդ ազգը արդէն թուլացած էր, իւր առաջուայ զօրութիւնը կորցրած: Հարկաւոր ուժ չունենալով, չէր կարողանում Ասորեստանին դիմադրել այն չափով, ինչ չափով որ նա հակառակօրդ էր հանդիսանում Եգիպտոսին: 46)

Կասկած չկայ, որ Նաիրի և Ուրարտուի ազգակից ցեղերից շատերը, գոնէ նրանք, որոնք իրենց աշխարհագրական գիրքով քեռացիներին միւսներին մօտ էին, երբեմն կազմում էին քեռացւոց ահագին կայսերութեան մի մասը, իսկ միւս բոլոր ազգերը պէտքէ որ բացառապէս Քեռացւոց քաղաքակրթութեան ազդեցութեան տակ գտնուէին: Կրթութիւնն ու գիրը, եթէ միայն այդպիսիք գոյութիւն ունէին հիւսիսային ազգերի մէջ մինչև Ասորեստանական ձևի գրերի մուտք գործելը, պէտքէ միմիայն քեռական եղած լինին: 47)

Բայ (Թանկագին քարի վերայ). Առանձին նշանակութիւն պէտքէ տալ na վերջաւորութեան (որ երկիր է նշանակում) հետեւեալ երկիրների անուանց մէջ օր. Lubar-na, Kunulna, Hatina, համեմատել Haldi-na (Քաղզէացւոց երկիր) և դարձեալ տեղերի անունների մէջ li վերջաւորութեան վերայ, բայց նա կարող էր անցնել և անձանց անուններին, ինչպէս օր. Sapalili.

16) W. Wright, The empire of the Hittites, London 1884.

17) Սէյսը հաստատապէս ընդունում է, որ Վանի քանդուած արձանագրութիւնները, որոնց վերանորոգութեան մասին խօսում է Մէնուան, (X XX^u

Բայց այդ բոլոր ժողովուրդները, համեմատած իրենց ցեղակից՝ ժողովրդի՝ այդ հին՝ մեռնող կայսերութեան հետ, դեռ նսրատի և կենսալի էին: Զարմանալին այս է, որ այդ ցեղերի մէջ գոյութիւն ունէին քետական նշանաւոր ժողովրդի տրագիցիաները (աւանգութիւններ) և ինչ չափով որ հանգչում էր բուն քետական ժողովրդի հանձարն ու կարողութիւնը, նոյն չափով հեռու հիւսիսում՝ ահագին գետերի և լեռնաշղթաների պաշտպանութեան տակ ապրող ցեղակից ժողովուրդների մէջ նորից և անընկճելի ուժով վերակենդանանում էին քետացւոց պէս համաշխարհային կայսերութիւն կազմելու գաղափարը և (instinctus) բրնազդումն՝ — իրականացնելու իրենց ցեղի ցայսօր չը յաջողուած, ուրիշ ժողովուրդներին գերազանցելու միտքը:

Հիւսիսային ազգերի անթիւ բազմութեան մէջ Ուրարտուի ժողովուրդը, Ասորեստանի թագաւորների տարեգրութեանց մէջ երևան գալուն պէս, աչքի է ընկնում պարզ և որոշ նպատակով — իւր իշխանութեան հպատակեցնել իրեն ազգակից ցեղերի բոլոր ժողովրդներին, որոնք ապրում էին հարաւում և գտնւում էին Ասորեստանի իշխանութեան ներքոյ — այսինքն առնել Նաիրի երկիրները: Այս բանը տեղի ունեցաւ IX դարու սկզբին Քրիստոսից առաջ և այդ ժամանակից սկսուած՝ երկու դար շարունակ համարեա անընդհատ կատաղի կռիւ է տեղի ունում Ասորեստանի և Ուրարտուի մէջ: Մեր առաջ իւր բոլոր նշանաւոր քաղէներում պարզ պատկերանում է ալարօգական և սեմական ցեղերի ամբողջ աշխարհին տիրելու օրհասական մրցումը: Սեմականները վերջ ի վերջոյ յաղթող հանգիստացան, բայց այդ դարաւոր պատերազմի ընթացքում Ասորեստանը շատ անգամ էր գտնւում կորստեան անդունդի եզերքին: Եւ ինչպէս փիւնիկական պատերազմների ժամանակ հարց էր լինում՝ արդեօք լատինական թէ սեմական պիտի լինի աշխարհս, այն-

իւր հրատարակած արձանագրութեանց մէջ) գրուած էին քետական մեհենագրերով, եթէ այստեղ խօսում է այն արձանագրութեանց մասին, որոնք գրուած են եղել սեպագրերի գործածութիւնից առաջ, ապա այդ ենթագրութիւնը միանգամայն հաւանական է,

պէս էլ IX դ և VIII դ դարերում Քրիստոսից առաջ կշեռքը քիչ չէր տատանուում ալարօդացւոց և սեմացւոց տիեզերական պատմութեան ապագայի վերաբերութեամբ: Յայտօր դեռ ցանկալի չափով ոչ ոք չըլուսաբանեց տիեզերական պատմութեան այդ հետաքրքրական և նշանաւոր մասը: Ես ինձ վրայ առի փորձ փորձել պարզելու այդ կռուի իսկական նպատակն ու նշանակութիւնը և ընդհանրապէս Ասորեստանի և Ուրարտուի (կամ աւելի ընդարձակ մոքով՝ Նաիրի երկիրների) փոխադարձ յարաբերութիւնները: Իմ նպատակս չէ մանրամասն նկարագրել այդ պատերազմի բոլոր հանգամանքներն ու մանրամասնութիւնները, այլ միայն որոշել և ցոյց տալ այդ կռուի ամենանշանաւոր (մոմէնտները) բոլորէները և փաստօրէն ապացուցանել (պնդել) մեր յայտնած ընդհանուր կարծիքը այդ շարժումների վերաբերութեամբ: 18)

Այդ հարցը, բացի տիեզերական պատմութեան համար ունեցած նշանակութիւնից, ստանում է և մի նոր նշանակութիւն մեր՝ ռուսական գիտութեան համար: Այդ տիեզերական անցքերի նշանաւոր կեդրոնը՝ Ասորեստանի և Ուրարտուի ընդհարումների եթէ ոչ բոլորի, գոնէ առաջնի և նշանաւորների առաջնորդը գտնուում էր ներկայումս Ռուսաստանին պատկանող հողի վերայ, որտեղ և մեզ հետաքրքրող ժամանակի վերաբերութեամբ Ուրարտուի ծագումն ունեցող շատ յիշատակարաններ են գտնուած:

Մոսկւայի հնագիտական ընկերութիւնը իւր վերայ է առել այդ յիշատակարաններ գտնելու և ուսումնասիրելու գործը և մենք իրաւունք ունինք ասելու, որ այդ հարցը մօտ է իսկապէս ռուսաց պատմութեան և հնագիտութեան: Արեւմտեան գիտութիւնն էլ իւր կողմից միմիայն ռուսաց գիտնականներին է սպասում այդ հարցի ապագայ յարուցման և նրան վերաբերեալ նիւթի մշակութեանը:

18) Ասորեստանական տարեգրութիւններից այս բանին վերաբերեալ քաղուածքները եւ արդէն հաւաքել նա՝ և միտք ունիմ առանձին հրատարակելու թարգմանութեամբ և ծանօթութիւններով:

Առաջինը Ասորեստանի թագաւորներից, որ մի շարք պատե-
րազմներ մղեց Նախրի երկրի հետ, Տիգլաթ—Պիլեսեր I էր,
որ իշխում էր մօտ 1100 թուին Քրիստոսից առաջ, բայց հիւ-
սիսում Նախրի բնակիչների հետ ընդհարումները սկսուած էին
աւելի վաղ: Ասուր-Նասիր—Աբալի արձանագրութիւններից ⁴⁹⁾
մենք գիտենք, որ Տիգլաթ—Պիլեսերից մօտ 200 տարի առաջ
ապրող Սաղմանասար I-ը (1300 թ. թ. առ), արշաւանք ունէր
Եփրատի ուղղութեամբ և նուաճեց հիւսիսային Միջագետքը,
հենց այնտեղ, ուր Տիգրիս և Եփրատ գետերի մէջ (Դիարբեքի-
րի՝ Տիգրանակերտի մօտ) սկսւում են գէպի հիւսիս՝ Նախրի եր-
կիր տանող անցքերը Տաւրոսի գոցները:

Նա այս տեղ շինեց քաղաքներ և բնակեցրեց Ասորեստանից
գաղթականներին: Այդ քաղաքները վերջը կործանուեցան և յե-
տոյ կրկին վերանորոգուեցան Ասուր—Նասիր—Աբալի ձեռքով:
Սաղմանասարը գեռ չէր թափանցել Նախրի բուն երկիրները,
այդ գերը վիճակուեց Տիգլաթ—Պիլեսեր առաջինին, որը հա-
տուածակողմի ²⁰⁾ վերայ եղած արձանագրութեան մէջ բաւա-
կան կենդանի կերպով և մանրամասն նկարագրում է իւր այդ յաղ-
թական արշաւանքը: Այն երկիրները, ուր նա պէտք է արշա-
ւէր, բնորոշում է որպէս ամենահեռաւոր և անմատչելի, որոնք
գտնւում էին մի ինչոր անորոշ և նրա կողմից «վերին» կոչուած
ծովի մօտ, իսկ նրանց թագաւորներին կոչում է «խոնարհութիւն
չունեցող»: Սրանից առաջ գեռ ոչոք ձանապարհ չէր հարթել
այնտեղ, պէտք էր փոխադրուել 16, նրա կողմից յաւանէ անուա-

49) 1. Rawl (ըրև վեճագիր.—H. Rawlinson, The cuneiform inscription of Western Asia, Vol 1—V) երես 19, սիւնեակ 1, 2 տող, երես 20, սիւնեակ 11 տ. 7. 111 Rawl, երես 6 տ. 44, վերջին տեղը կարգացում է այսպէս.—Si-nabu Tidu birate sa sulmanu—asaridu sar (matu) Assur rubu alik ma-nabu Tidu Nairi usasbisu sa (matu) Arumu ina dannani ekimuni ana ramenia uflera, այսինքն Սինաբու Տիգու . . . այն ամրոցները, որը Ասորես-տանի Սաղմանասար թագաւորը՝ նախորդս բնակեցրել էր Նախրի երկրի գէմ և Արումանները (Արամեանք) զօրով խլել էին, եւ կրկին վերագործրի:

20) 1 Bawl. երես 12, սիւնեակ IV. գ. 43—V, 21.

նէ յիշուած, ահագին սարերով և իւր ձեռքով կառուցած կամուրջներով մեծ գթութեամբ անցնել եփրատ գետը: Եփրատ գետն անցնելուց՝ նա պատահում է Նաիրի 23 երկիրներէ²¹⁾ դաշնակից թագաւորներին: Ասորեստանի թագաւորը թրւում է այդ երկիրները, որոնց մէջ գեռ Ուրարտուն չկայ: Նա կատարելապէս յաղթել և ցրուել է նոցա և նրանց օգնելու համար դուրս եկած 60 թագաւորներին քշել «վերին ծովի» ուղղութեամբ, ապա նրանց երկիրներն աւերելուց յետոյ, կենդանի գերել, բայց յետոյ ներել և արձակել է՝ յաւիտեան իրեն հնազանդելու ու հարկ տալու երդումով: Ահա մեզ հետաքրքրող ազգերի առաջին անգամ՝ պատմական ասպարիզում երևան գալը: Հետաքրքիր է այն հարցը, թէ ո՞րտեղ տեղի ունեցաւ այս նշանաւոր ընդհարումը և այդ ի՞նչ ծով է, որի մօտ ապրում էին Նաիրի թագաւորները և որի ուղղութեամբ նա հալածեց նոցա:

Այս հարցին գիտնականները տալիս են հակասական պատասխաններ: Նրադերն ²²⁾ ու Տիլլէն ²³⁾ այդ ծով ասածը վանայ լիճն են ընդունում: Մէյերն ²⁴⁾ ընդունում է Սև, իսկ Հոմմելը — Միջերկրական ծով: Մենք Ասորեստանի արձանագրութեանց մէջ իրենց կայսրութեան սահմաններում գտնուած ծովերին տուած զանազան անորոշ անուններ լուսաբանելու ետեւից չենք ընկնիլ և չենք քննադատիլ այդ բանի վերաբերութեամբ եղած անորոշ ենթադրութիւնները, բայց միանգամայն շեղուել այդ հարցից չենք կարող, որովհետեւ մեր գրած խնդրի վերաբերութեամբ այդ անհրաժեշտ է: Այս դէպքում աւելի հաւանական է թւում կարծել, որ «վերին ծով» կոչուածը Սև ծովն է, որին որպէս

21) Այդ երկիրների անուանց թուարկութիւնն ու վերլուծութիւնը տես երես 858.

22) H. Schrader, die Namen der Meere in den assyrischen Inschriften, *գետն-դուած է* Abhandlungen der Akademie der Wissenschaften-ի *մէջ*, Berlin, 1877 178—195 երես.

23) C. P. Tiele, Babilonisch—assyrische Geschichte, երես 163.

24) E. Meyer, Geschichte des Altertums I երես 330.

ապացոյց ծառայում են 16 մեծ լեռները և Եփրատն անցնելը, որը պէտք է արեւմտեան Եփրատն ընդունել (Կարա—սու) և ապա մինչև ծովի ափն եղած հետապնդումն: Վանայ լիճը յամենայն դէպս գտնւում է ոչ թէ Եփրատից, այլ և Արածանուց՝ արեւմտեան Եփրատից հարաւ: Բայց մօտ և անաչառ քննելով՝ պէտք է առաւելութիւն տալ այն կարծեաց, որ վերին ծով՝ անուան տակ ենթադրւում է Վանայ լիճը, որը Ասորեստանի ուրիշ արձանագրութեանց մէջ կոչւում է Նաիրի երկրի վերին ծով: Թէև այստեղ չի յիշւում Ուրարտու անունը, բայց գանձման է այն արշաւանքներին, որոնք մղւում էին Ուրարտու երկրում: Եփրատ անուան տակ ոչ մի արգելք չկայ ենթադրելու արեւելեան Եփրատը կամ Արածանի գետը, իսկ 16 լեռները, որոնցով պէտք էր անցնել Ուրարտուին հասնելու, ենթադրւում են Տաւրոս լեռնաշղթայով անցնելու դժուար անցքերը, որոնք գտնւում էին Տիգրիսի և Արածանու մէջ: Ընդհարումը տեղի է ունենում Եփրատի և Արածանու մէջտեղը: Այստեղ, Նաիրի ուրիշ ժողովուրդներին թէև գաշնակից, բայց այդ արշաւանքի ժամանակ իւր գերակշիռ գերով նրանցից միանգամայն տարբեր է հանդիսանում Դայաենի ժողովուրդը, որը յայտնի կերպով առաջնորդւում է գաշնակիցներին: Բայց այդ՝ Բիայնային ամենամօտ և Վանայ լճի ու Արաքսի մէջ գտնուող ժողովուրդի մասին մենք բաւականին տեղեկութիւն ունինք Վանի արձանագրութիւններից (Դիախունի Վանի արձանագրութեանց մէջ): Դորանով է բացատրւում այն հանգամանքը, որ Ասորեստանի թագաւորը, գաշնակիցներին Եփրատի ափին յաղթելուց յետոյ, գնում է դէպի ծովը՝ Վանայ լիճը, որտեղ ապրում էր Դայաենի ժողովուրդը և 60 թագաւորներին խմբովին գերում:

Թարգ. Ռուսեր. ԵՂԻՇԷ ԱՐԵՂԱՅ ՄՈՒՐԱԴԵԱՆ.

(Կը շարունակի):

25) Fritz Hommel, Geschichte Babyloniens und Assyriens, երես 526

26) Дияухини պէտք է բաժանել այսպէս. — Diau—hi—ni, վերջին ni ն մասնիկ է (երևի նոյն կերպարանք տուող, ինչ որ Տաւրոսունի արձանագրութեան մէջ, տես № 1). hi նշանակում է որդի, իսկապէս ամբողջ բառը նշանակում է Դիաունի որդու երկիր. այդպիսի վերլուծութեան միջոցին Ասորեստանական Daiaeni—ին նմանութիւնը որոշւում է աւելի պարզ. Մենուայի նշանաւոր արշաւանքի մասին այդ երկրում տես Սէյս, № XXX.